ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» Մարտի 2017 թ. N 35-Հ

ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N26 նիստի արձանագրության 24-րդ հարցի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման ծրագիրը, համաձայն N 1 հավելվածի.

2) միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը, համաձայն N 2 հավելվածի:

Նախագահ՝ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«09» Մարտի 2017 թ.
ք.Երևան

Հավելված N 1
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի
«09» մարտի 2017թ. N 35-Ն հրամանի

ԾՐԱԳԻՐ

Միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման

ՆԱԽԱԲԱՆ

1. ՀՀ կառավարության որդեգրած՝ համաչափ տարածքային զարգացման քաղաքականության ապահովումը պայմանավորված է տարածքային զարգացման նպատակային ծրագրերի մշակմամբ և արդյունավետ իրականացմամբ, մասնավորապես միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակմամբ:

2. Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ հանրապետության տարածական զարգացման հիմնախնդիրներն ու դրանց լուծմանը նպատակաուղղված միջոցառումներն ամրագրվում են տարածական զարգացման հենքը հանդիսացող՝ ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակների հիերարխիկ կառուցվածք ունեցող պլանավորման փաստաթղթերով: Ինչպես եվրոպական երկրների գերակշիռ մասում, մեզանում ևս, դրանք սերտորեն շաղկապված են երկրի վարչատարածքային կառուցվածքի հետ՝ արտացոլելով համապատասխան միավորին բնորոշ խնդիրների շրջանակը:



3. Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և հաստատման ընթացակարգի օպտիմալացման նպատակով սահմանվել է տարածական պլանավորման ռեգիոնալ (միկրոռեգիոնալ) և տեղական մակարդակները համադրող՝ մեկից ավելի համայնքներ ընդգրկող տարածքային հատակագծման նախագծերը և համայնքների գլխավոր հատակագծերն ու գոտիավորման նախագծերը միավորող պլանավորման փաստաթղթեր (համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր)՝ վերջիններիս շրջանակներում ներառելով համայնքների գոտևորման նախագծերը:

Համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ
համայնքների խմբերի համար
միկրոռեգիոնալ մակարդակ+տեղական մակարդակ

I. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի N 36 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.4 հոդվածով, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511 որոշմամբ հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» 2.2.6 կետով, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 384-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության ծրագրի» 14-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված դրույթները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորմանը՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների պարզեցման, հստակեցման, բնակավայրերի անվտանգ և բնականոն զարգացումն ապահովող մեխանիզմների միջոցով:

6. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն միկրոռեգիոնալ մակարդակի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն ըստ էության տարածքային հատակագծման նախագծեր են (մշակվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներով)՝ համատեղված համայքների գոտևորման նախագծերի հետ (մշակվում են համայնքային բյուջեների միջոցներով): Միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթղթով կարող են սահմանվել պարզեցված գլխավոր հատակագծի հիմնադրույթները, համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները:

7. Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման խնդիրը պարզեցնելու նպատակով ամրագրվել է համայնքների խմբավորումների ձևավորման օրինաչափություններն ու պլանավորման փաստաթղթերի մշակման առաջնահերթությունները, որպես այդպիսին դիտարկելով ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքները: Նման մոտեցման կիրառմամբ հանրապետության համայնքների գերակշիռ մասը կարող է առավել օպտիմալ կերպով, այդ թվում նաև ֆինանսական առումով, ապահովվել անհրաժեշտ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով:

8. Միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման դեպքում ՀՀ համայնքների մասով ծախսերը զգալիորեն կրճատվում են՝ առանձին համայնքների գլխավոր հատակագծերի նախագծերի համեմատությամբ:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

9. Առաջնահերթության կարգով նախատեսվում է մշակել ռազմավարական նշանակություն ունեցող համայնքների խմբերի տարածական պլանավորման փաստաթղթերը:

10. Այդ նպատակով 2017 թվականին նպատակահարմար է մշակել սահմանամերձ ՀՀ Տավուշի մարզի համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը: ՀՀ Տավուշի մարզի համայնքների թիվը խոշորացման արդյունքում 40 է և դրանք ներառվել են 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում (բացառությամբ Դիլիջան համայնքի, որի գլխավոր հատակագիծը մշակման փուլում է):

11. 2017 թվականին հատկացված չափաքանակի շրջանակներում նախատեսվում է մշակել ՀՀ Տավուշի մարզի համայնքների 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր, որոնք ներառում են համապատասխանաբար՝ 55 բնակավայրեր:

12. 2018 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել ՀՀ Սյունիքի մարզի 72 համայնքների և ՀՀ Արմավիրի մարզի 97 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը: ՀՀ Արմավիրի մարզի համայնքների թիվը խոշորացման արդյունքում 97 է, դրանք ներառվել են 9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում, իսկ ՀՀ Սյունիքի մարզի 72 համայնքները՝ 11 փաստաթղթերում:

13. 2019 թվականին կմշակվեն ՀՀ Արագածոտնի մարզի 114 համայնքների և ՀՀ Արարատի մարզի 95 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը: ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների թիվը խոշորացման արդյունքում 114 է և դրանք ներառվել են 10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում, իսկ ՀՀ Արարատի մարզինը՝ 95, դրանք ներառվել են 9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում

14. 2020 թվականին կմշակվեն ՀՀ Կոտայքի մարզի 67 համայնքների և ՀՀ Լոռու մարզի 107 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը ՀՀ Կոտայքի մարզի համայնքների թիվը խոշորացման արդյունքում 67 է, դրանք ներառվել են 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում, իսկ ՀՀ Լոռու մարզի 107 համայնքները ներառվել են 10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակներում:

IV. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

14. Ռազմավարական սկզբունքներից ելնելով և հաշվի առնելով ՀՀ Տավուշի մարզի համայնքների սահմանամերձ անբարենպաստ դիրքը՝ առաջարկվում է վերջինիս համար ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

15. ՀՀ Սյունիքի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Լոռու և ՀՀ Կոտայքի մարզերի բնակավայրերի տարածքներում համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ տարածքային հատակագծման նախագծերի մասով ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի, իսկ գոտևորման նախագծերի մասով՝ համայնքային բյուջեների միջոցներով:

16. Ծրագրի 2018-2020 թվականների համար նախատեսված հատվածի հաշվարկները (ՀՀ Սյունիքի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Կոտայքի և ՀՀ Լոռու մարզեր) ներկայացված են խոշորացված, ընդհանուր՝ յուրաքանչյուր մարզի տարածքի համար, քանի որ համայնքների խմբերը նպատակահարմար է ձևավորել համայնքների խոշորացման ծրագրով միավորվող խմբերին համապատասխան: Խոշորացման ծրագրի ավարտից հետո ՀՀ Սյունիքի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Կոտայքի և ՀՀ Լոռու մարզերի մասով ծրագրի մանրամասները կհստակեցվեն:

Հավելված N 2
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի
«09» Դեկտեմբեր 2017թ. N35-Ն հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Մշակման ենթակա աշխատանքների անվանումները	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8
ՀՀ Տավուշի մարզի համայնքները ներառող 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում							
1.1.	Ելակետային տվյալների ձեռքբերում, համալիր վերլուծություն, տարածքային հատակագծման նախագծերի մշակում, գոտևորման նախագծերի մշակում, օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների անցկացում, նախագծի հաստատում	ծրագրում ներառված՝ թվով 55 բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորում	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե կատարողը՝ համապատասխան լիցենզիա ունեցող, գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցույթում շահած նախահծային կազմակերպություն	համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծեր	2017 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	140000.00/-ՀՀ պետական բյուջե (նախագծերի արժեքը նվազեցվել է համամասնորեն, պետական բյուջեի միջոցներից տրամադրված գումարին համապատասխան)
ՀՀ Սյունիքի և ՀՀ Արմավիրի մարզերի համայնքները ներառող 20 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում							
1.2	Ելակետային տվյալների ձեռքբերում, համալիր վերլուծություն, տարածքային հատակագծման նախագծերի մշակում, գոտևորման նախագծերի մշակում, օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների անցկացում, նախագծի հաստատում	ծրագրում ներառված՝ թվով 169 բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորում,	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեկատարողը՝ համապատասխան լիցենզիա ունեցող, գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցույթում շահած նախագծային կազմակերպություն	համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծեր	2018 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե համապատասխան համայնքների բյուջեներ և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	343178.1 /ՀՀ պետ. բյուջե 269065.09/ ՀՀ համայնքների բյուջե

NN ը/կ	Մշակման ենթակա աշխատանքների անվանումները	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8
ՀՀ Արագածոտնի և ՀՀ Արարատի մարզերի համայնքները ներառող 19 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում							
1.3	Ելակետային տվյալների ձեռքբերում, համալիր վերլուծություն, տարածքային հատակագծման նախագծերի մշակում, գոտևորման նախագծերի մշակում, օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների անցկացում, նախագծի հաստատում	ծրագրում ներառված՝ թվով 209 բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորում,	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե կատարողը՝ համապատասխան լիցենզիա ունեցող, գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցույթում շահած նախագծային կազմակերպություն	համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծեր	2019 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե համապատասխան համայնքների բյուջեներ և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	334616.75/ ՀՀ պետ. բյուջե 235079.82/ ՀՀ համայնքների բյուջե
ՀՀ Կոտայքի և ՀՀ Լոռու մարզերի համայնքները ներառող 16 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում							
1.3	Ելակետային տվյալների ձեռքբերում, համալիր վերլուծություն, տարածքային հատակագծման նախագծերի մշակում, գոտևորման նախագծերի մշակում, օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների անցկացում, նախագծի հաստատում	ծրագրում ներառված՝ թվով 174 բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորում,	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե կատարողը՝ համապատասխան լիցենզիա ունեցող, գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով մրցույթում շահած նախագծային կազմակերպություն	համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծեր	2020 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե համապատասխան համայնքների բյուջեներ և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	337112.94/ ՀՀ պետ. բյուջե 282222.92/ ՀՀ համայնքների բյուջե